



Թալիբ Էֆենդիին և երկու տա-  
ճիկ հարիւրապետներ մի ամբողջ  
գրչեր նրան տանջել են տալիս:  
Նախ ֆալախայի մէջ են գնում:  
Ապա մեքենայով կապկարում են՝  
բազուկները սլաքած՝ երկու գե-  
րաններից և գանակոծութիւնն  
սկսում: Թշուառը չէ կարողանում  
ոչ մի անգամ շարժել: Ղէմբի  
շարժումները մատնում էին իւր  
տանջանքը: Ինչքան շատ է աղա-  
ղակում, այնքան աւելի են գա-  
նակոծում: Նա սպառառում է իւր  
գահիճներին՝ գէթ իրեն սպա-  
նեն: Փորձում է գլուխը գերա-  
նին դարկել ջախջախել, բայց  
արգելք են լինում: Եւ որովհե-  
տեւ իւրաւիկները գէմ վկայու-  
թիւն չէր տալիս, չէր կամենում  
անմեղներէ արիւնով իրեն անձը  
արատաւորել, Թալիբը հրամա-  
յում է նախ մօրուքի մագերը ու-  
նելիքով փետտել, ապա սկսում  
հնազանդ երկպիմով մարմինը խան-  
ձել, ձեռքերն ալիւ, երեսը,  
բոքերը և մարմնի միւս անդամ-  
ները: Հրաշիկ ունելիքով աւրում  
են նրա լիզուն: Երեք անգամ  
ուշագնաց է լինում, սակայն մը-  
նում է անյողողը, անընկճելի-  
հարեան քնակարանում՝ արտա-  
փից արձան կտրու՝ լսում են իւր  
աղաղակները կիւնը և զաւակ-  
ները՝ և:

Եւ այժմ բանտային կեանքը,  
օրինակ, Բիթ լիւում, որտեղ բան-  
տարկեալները հարիւրներով թափ-  
թփած իրար չվրայ՝ երբեմն ոչ  
նասել և ոչ կանգնել են կարո-  
ղանում, և, իրումն ամենայնի  
քաղցած ու կտտանքների են-  
թակայ:

Բիթ լիւում ամենալաւ հայե-  
րից մէկին, Համբարձում Բոյա-  
ճեան, մի մթին և խոնաւ ծա-  
կոխորչ են նետում, վիզը եր-  
կաթէ օղակ ձգում և երկաթէ  
ծանր շղթաներով ձեռքերն ու  
բոքերը կապկարում: Քաղցով տան-  
ջում են նրան, որպէսզի հարկա-

\*) G. Godet. Հայաստանի տառա-  
պանքները. էջ 19, 20, 26, 27.

գրեն գրաւոր խոստովանութիւն  
տալու, որպէս թէ նա անգլիա-  
կա: Կառավարութիւնից կաշա-  
ռած է: Երբոր յամառօրէն բա-  
յատում է, տասը կիւղգրամմանոց  
երկաթէ ծանր գունդ են ձգում  
վիզը, գանակոծում են սաստիկ,  
մահակներով ծեծում, բանտի յա-  
տակին մեխեր ցցում և վրայից  
գլորում, մինչև որ գիտակցու-  
թիւնը կորցնում է: Ապա ուշքի  
են բերում նրան և կախում՝)

Գիտեմ, և ես այս շատ լաւ  
զգացի, դուք ինձ հաճոյքով չը  
լրանցիք: Գուք ձեզ վրայ ոյժ  
գործ դրեցիք, որպէսզի չաղա-  
ղակէք ինձ՝ բաւական է: Եւ ար-  
դէն նկատեցի, որ շատ կանայք  
գահիճելի հեռացան:

Նրանց համար նողկալի է և-  
ղել աւս ամենը լսելը: Այն ժա-  
մանակ բաղմապատկեցէք ա՛ն  
սարսափելի դէպքերը, նողկանք-  
ները, որ ես պատմեցի, մի քա-  
նի հարիւր հազար անգամ, և  
մտածեցէք, ինչ որ Բերլինի կա-  
նայք չկարողացան լսել, նոյնը  
հարիւր հազար անգամ կրել, հան-  
դուրծել են հայերը:

Աս բանը պատահել է մեր  
ժամանակ, վերջին տասնամեա-  
կում, մօտաւորապէս 4-5 օրուայ  
ճանապարհ այստեղից հեռու, և  
մենք թող ենք տուել, որ կա-  
տարուի, ոչինչ չենք արել ար-  
գիլելու համար:

(Շարունակելի)

**ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ԱՐՁԱԳԱՆԳ ՄԸ**

Կը խնդրուի մեզմէ հրատարակել  
հետեւեալ նամակը:  
1903 Յունիս 5ին Բեմախ \*\*\* գիւղէն  
Սրտահատոր զաւակս Թ...  
ի Սօֆիա  
Ահա կիմացնեմ մեր տագնա-  
պալի վիճակը: Մարտէն իվեր է  
\*) Թիւրքմացութիւն, — Անմահ  
Հ. Բոյաճեանը դեռ տառապում է բան-  
տում. Ծ. Թ.

արդէն կառավարութիւնը անդա-  
գար կը շարշարէ մեզ, անհամ-  
բեր տուրքեր կը հաւաքէ, որոնց  
համար մեր Բեմախու հայ գիւ-  
ղերուն շատ մը գոյրերը, անա-  
տուները ծախուցան թաղքին  
աղտոտ թիւրքերուն, որոնք ար-  
դէն իվաղուց սկսած են տեղոյս  
Հայ ժողովուրդին արիւնը ծծել  
սզրուկի պէս իրենց զաշխատու-  
թեանքը օ/օ ին 50 տոկոս առնե-  
լով: Ահա աւս վերջին տարիներու  
բողոքովին խիղճեցնին մարած՝  
ամեն տեսակ կեղծիք, կեղեքու-  
մներ իգործ գնելով այսօր ամեն  
մէկը մէյմէկ լորտ եղած են Հայ  
ժողովուրդին քրտնաթոր վաստա-  
կովը: Թողունք այն վատերը ու  
քիչ մընալ խօսինք տեղոյ վա-  
րենի, անգույթ քիւրտերուն վա-  
րագութեանը վրայ, որոնք սն-  
շուշտ տեղա ին կառավարութե-  
նէն թեւադրուած՝ արձակ հա-  
մարձակ կը շրջին գիւղերնիս,  
աչքերնուն ինչ որ զպչի՝ անմի-  
շտպէս կը յափշտակեն: Վա՛յ է  
եկեր այն հայուն զլիւն, որ ա-  
նոնց պղտիկ գիտողութիւն մը  
կամ, աւելի ճիշդը, աչաչանք մը  
կուղղէ. այն առեն սաստիկ ծեծի  
ենթարկուելէ զատ՝ անոր տունը  
բողոքովին աւարի կը արուի:

Ահա քեզի մի քանի սրտա-  
ճմլիկ դէպքեր, որոնք կատարե-  
ցան այս մէկ երկու ամսուան մէջ:  
Մայիս 17ին, խումբ մը քիւր-  
տեր ցերեկ ժամանակ կը յար-  
ձակին Աւագ վանքի վրայ, այն-  
տեղ թէ՛ վանքին սակեղէն, ար-  
ծաթեղէն անօթները և թէ՛ տեղ-  
ւոյն հայերուն տան կահ կարա-  
սինքը, ոչխար, ա՛ծ, կով, ձի  
և վերջապէս ինչ որ կը գտնեն՝  
բողբը յափշտակելով կը հեռա-  
նան: Նոյն քիւրտերէն մէկ քանին  
զատուելով աւարտուունքէն՝ կու-  
զան Գառնի գիւղը ու հոն կիջե-  
ւանին Երեկոյին տիար Գալուստ  
Բարեխոնեանի տունը: Առաւօ-  
տուն կեցնեն տիար Գալուստը  
գուրս կանչելով, իբր թէ գաղ-  
անի ըսելիք մը ունին, կը տա-

նին եկեղեցիին կիցը, խեղճին  
երեք գաշտի հարուած ու երեք  
ալ հրացանի գնդակ տալով կը  
ձգեն, կը հեռանան: Խեղճին մա-  
հը վայրկեանական ըլլալով բառ մը  
անգամ չի կրնար արձակել: Ահա  
աւս աղէտալի դէպքը պատահե-  
լով հանդերձ ոճրագործ քիւր-  
տերը արձակ համարձակ զինուած  
կը պտտտին մեր գիւղերը: Յու-  
նիս 5ին նոյն քիւրտերը, այս  
անգամ աւելի բազմութեամբ,  
գրչեր ժամանակ, կը հարձակին  
Թորթան գիւղի վրայ, տունն իւր  
գուները կոտորելով ներս կը խու-  
ժեն: Խեղճ տնեցիները սարսա-  
փահար կուլան, կաղաղակեն. բայց  
վայրենի քիւրտերը սուսաց լսե-  
լու անոնց աղաչանաց՝ ամեն ան-  
գթութիւն իգործ կը գնեն և  
գիւղէն 3 մարդ սպանելով ու 12  
ալ վիրաւոր ձգելով կը հեռանան:  
Յաջորդ օրը կը յարձակին Թալ-  
կըներ գիւղի վրայ, որ Թորթա-  
նէ կէս ժամ հեռի՝ հայաբնակ  
գիւղ մըն է: Այստեղ աւելի չա-  
րութեամբ կը տանջեն ժողովուր-  
դը, անխնայ կը հարուածեն տե-  
ղին երիտասարդները՝ սուարի-  
ւով թէ այս տարի ձեռ հայ ա-  
նունը պիտի վերցնենք մեր եր-  
կրէն, որովհետեւ այս է մեր Սուր-  
թանի կամքը, բացարձակ հրա-  
մանք: Աւ այսպէս գիւղին մէկ  
մասն ալ սլքելով, մէկ քանի  
սպանուած, շատ մընալ վիրա-  
ւորեալը ձգեն ու գեղին ամբողջ  
իրեղէնները, նաև անասուններէն  
և ոչ մէկ հատ թողլով՝ ամբողջ  
աւարի տուած, գիւղն ալ կար-  
գէթանի նման մոխրակոյտ մը  
գարձուցած կանցնին: Ասոնք և  
այոնց նման շատ մը դէպքեր  
ամեն օր կայ, բայց գրչու վրայ  
չեղծար որ գրեմս Թուրքանէս  
մէկ քանի օր առաջ ալ Բաքառ-  
ճեցոց 7 շորիները տարին քիւր-  
տերը, երեքը անասունի ճամբան,  
չորսն ալ քաղաք գարձած տտեն-  
նին՝ գիւղին առջև քիւրտերը  
գէմնրնին կելլեն, նախ անոնց  
տէրերուն հրացանի կոթով հար-

ջին Գարեբու մոլուսնդ կրօնական ե-  
ռանգին:

Անոնցմէ մեծ մասը չեն գիտի  
մինչև Իսկ պարզ կերպով բացատրել  
ա՛յն, ինչ որ կուզեն: Անոնք, մեծա-  
մասամբ, հազու թէ ունին անո-  
րոչ և մի մթին գաղափար ընկե-  
րուեթեան մը, ուր ամեն մարդ պիտի  
կրնայ իրականացան իր ցանկութիւն-  
ները և բաւարարութիւն տալ իր քնա-  
հանձններուն: Միթէ փորձը բաւա-  
կան չէ՞, ցոյց տայու համար որ ազա-  
տութիւնը, առանց հաւատարութեան  
կը հանդի աւելի ճարպիկի և ուժեղի  
ազատութեան և թէ այդ հաւատա-  
րութիւնը պէտք է լինի բոլոր ցանկո-  
թիւններու առաջինը, որովհետեւ ա-  
ռանց անոր սպասելի են զարաւոր  
կուրներ և կամ նոր գերութիւն  
կերելի թէ ո՛չ:

(Շարունակելի)

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**ԱՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ**  
**ՊԵՏՅԵՑ**  
քաղաքակնէց Ըրակտերէնէ  
Ա. Տ. Եան

**ԱՋԱՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ**  
**ԷՎՕՒԻՍԹԻԱՆ (ԲԱՐՆԵՐՁՈՒՄ)**

Ատենով ազատութեան պէտքը  
նոյն իսկ անծանօթ էր: Միայն ժիւր-  
դարէն ի վեր է, որ փիլիսոփաներ սկսան  
խօսիլ անձնական ազատութեան մա-  
սին, և որոնց ազգերանիքը ջանա-  
ցին զայն իրականացնել ֆրանսական  
Յեղափոխութեամբ, և այս ամենը  
հակառակ քրիստոնէական կրօնքի ան-  
հատկանութեան:

Փրանսական Յեղափոխութիւնը  
չնչեց ինչպէս ճնշումը, նոյնպէս և  
պատշտականութիւնը ֆէօտալական կար-  
գերու: Եւ մենք դեռ եւս միշտ կեն-  
թարկուինք այդ ցնորքի ճակատագրա-

կան հետեւանքներուն ժողովուրդնե-  
րու ժողովական բնաւորութեան ազ-  
դեցութիւնը շանհետացաւ գաղտնութիւն  
ներով, վերացական վարդապետութիւ-  
ններով, փայլուն յայտարարութիւննե-  
րով: Էն բարձրացած իտէալը, քանի  
իւր ժամանակը չէ եկած, այնքան եր-  
կար ատեն ընդունիլ չպիտի լինի ի-  
րականացման: Եթէ մենք չենք ու-  
զեր վերագտնալ վայրենական գրու-  
թեան, ուր ամեն մարդ կ'առնէ ու-  
կընէ ինչ որ ուզէ, եթէ մենք չենք ու-  
զեր ինքզինքնիս գոհանցնել զոյգ զոյգ  
ապրելով, ինչպէս Սէյլանի անտառ-  
ներու վէտաները, կամ երկվեցեակ-  
ներով, ինչպէս կարապիլները, Պուս-  
մանները, Առօքէնները, Յուէթիէնե-  
րը եւն, եթէ մենք չենք ուզեր ան-  
սոնք, պէտք է սահման դնել անհատի  
ազատութեան: Մի հասարակութիւն  
չի կազմուի, բայց եթէ այն ժամա-  
նակ, երբ իրական ժամանակակից մար-  
դու մէջ կը վերացուին հակահասա-  
րակական ծրիբքը: Մեր ձեռքի տակ  
եղած, և ոչ ապագայի նիւթերով է

որ մենք պէտք է աշխատինք:  
Սրբազան պարտականութիւն մըն  
է բարեւաւ այդ նիւթերը, այսինքն  
մարդու բնաւորութիւնը, միջաւայրի  
պարագաները, որոնց մէջ կ'ապրի:  
Ընկերական վիճակներ ստեղծելով է  
որ ազատութիւնը հնարաւոր պիտի  
ըլլայ, զարգացնելով զգացումներն  
ընդհանրականութեան և համարաշխու-  
թեան, սպահովելով ազգարութիւնը  
և իրաւունքներու հաւասարութիւնը,  
մենք պիտի հասնինք աւելի բարձրա-  
ցած բարոյական աստիճանի մը և ուր  
իշխանութիւնը պիտի դարձնէ սա-  
կաւ առ սակաւ կարեւոր: Այսպէսով  
մենք ազատութեան համար աւելի շատ  
բան ըրած պիտի ըլլանք, քան անոնք,  
որոնք իրենց կանչուընտրութիւնով ոչ  
թէ միայն կը կեղծեն յիզափոխու-  
թեան բնաւորութիւնը, այլ անիկայ  
կը փութացնեն վտանգի մէջ և կը  
թերացնեն իր նպատակէն:

Կոյր կիրքը, որ կը վարդապետեն  
մեծ մասամբ անիլիստականները, ա-  
զատութեան համար կը նմանի Մի-

# ՍԱՊԱՀ—ԳԻԻԼԵԱՆ ԶԱՐՆՈՒԱԾ

52

Վերջին պահուս խմբագրութիւնս ստացաւ հետեւեալ  
հեռագիրը:

„ՍԱՊԱՀԻՆ ԶԱՐԿԵԼ ԵՆ ԲՍՅՅ ՎՏԱՆԳԱԻՈՐ ԶԷ“

[Faint, illegible text on a blank page, possibly bleed-through from the reverse side.]

սոս  
մ'եծ  
րոկ  
գեւ  
գաւ  
նեբել  
ժիւ  
հա  
նոր  
ահա  
խեւ  
բերտ  
պաւ  
ւած  
պիւ  
ժը  
Ռւ  
պիւ  
ն  
պիւ  
միւ  
միւ  
պիւ

ամենքը հասցնելու ու ծեծելու յետոյ խեղճերը կեամբն վիճակի մէջ կը ձգեն ու ջորիները կառնեն կերթան։ Այս սրտածուրկ նամակ կարգալով տեղւոյ թէ՛ հայ և թէ՛ արաբական թերթերուն հրատարակել տաս, ու յետ մեր բոլոր քեմախցի եղբայրները ու թէ՛ անոնցմէ Հայրենիք գալու փափաքողներ գտնուին՝ ետ մնան իրենց ճամբորդութենէն, չըլլա թէ՛ գան աւել զժողովին կողմերը։ Գոնէ գուր ողջ ազատեցէք վատ թիւրքին ճիրաններէն. արդէն մենք աշատման յոյս չունենք։ Վերջ դրութեանս, արտասուալիբ աչքերս սրտով ըմբռնեմ։

Գ ժ ր Ե ր Կ ր Գ Մ . . .

**Ա Ր Ե Ի Մ Տ Ե Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի Բ .**

Գերմանական ռաշխուսագի բնորոշ թիւները վերջացան և իրենց արդիւնքով ծանր նշում գործեցին պահպանական, կառավարական և այլ կուսակցութիւններին ու սրանց բերան թերթերի վրայ. . . . Համարեա բոլոր գրախառն կուսակցութիւններին պատգամաւորներին թիւը նուազել է յօգուտ սոցիալ-դեմոկրատներին։ Վերջիններս այժմ 23 պատգամաւոր աւելի ունին՝ քան թէ անցեալ շրջանում, իսկ այս բանը սարսափ է ազգում թէ՛ կառավարութեան և թէ՛ հակառակորդ կուսակցութիւններին։ Սոցիալ-դեմոկրատներն ամենից շատ յաջողութիւն են ունեցել Սաքսոնիայում։ Ամբողջ Գերմանիան Սաքսոնիա պիտի դարձնենք ասում է սոցիալիստներին օրդան «Vorwärts»-ը յաղթանակով։

Ի Երկրի թաղերից մէկում, ուր միշտ ընտրուել են ազատախոհները ահագին հազարների մեծամասնութեամբ, այս անգամ լոկ 400—500 ձայնով կարողացել են պարտութիւնից դուրս գալ այնտեղ, ուր մասնակցողներին թիւը ամէն մի կողմից մի քանի տասնակ հազարների է հասնում։ Իրենք յաղթողները, խորին հիասթափութեամբ և յուսահատութեամբ բացականչում են իրենց օրդաններում։ «Das Lieben ist geteilt, die Ehre verloren», «մարմինն ազատուած է, պատիւը կորցրած»։ Եւ այս խօսքերն ասում են սոցիալ-դեմոկրատներին աճեցող ոյժը տեսնելով։

Ռաշխուսագի ամենաշօքեղ կուսակցութիւնը, կենտրոնը, որանցեալ նստաշրջանում 105 պատգամաւոր ունէր, այժմ 100 ունի միայն, սոցիալ-դեմոկրատները 81 պատգամաւոր ուրեմն իրենց թիւով երկրորդ և զօրեղագոյն կուսակցութիւնն են կազմում աժմ, այնպէս որ փոխ-նախագահն էլ շատ հաւանական է, որ սրանց ջնջ ընտրուի և, այսպիսով, աւելի առիթ տայ իրենց ձայնը

հզօր բարձր ցնելու։ Ինչև է՝ Մէնք աւել յնդրի վրայ այլևս չենք ցանկանում երկարորէն կանգ առնել, հաստատ իմանալով որ «Վերածնութեան» ընթերցողները առիթ են ունեցել այդ մասին ծանօթանալու մի աւել շուտապէս թղթակցութիւնից։

Քաղաքականութեան սիրտը, կորիզը Փարիզն է, ասում է չըզիտեմ ո՛վ։ Հարցերը ծնում են Փարիզում, մկրտում Իեռլինում և գործադրում՝ Լոնդոնում. . . . Եւ արդարև, ինչ պատմական խոշոր և դարապարտ կողմող երեւոյթ ասես, որ բունկուած չըլինի դիւրաբորոք ֆրանսիացիների մէջ։ Որքան դարեր են մարդկութեան միտքը կրթել, լուսաւորել և զեկավարել նրանք. . . . Պատմական և քաղաքական որպիսի սխալարիւղները — անակնկալներ ասես չէ տուել և չէ տալիս այդ երկրերը. . . . Մեր նպատակից շատ հեռու է, և վերջապէս, անկարելի է մի պարբերական թերթի սուղ էջը բումկանգ առնել և պատմական փաստերով ու իրողութիւններով պարզաբանել ընթերցողի առաջ վերայիշեալի ճշմարտութիւնը։ Այս անգամ, սակայն, թեթեակի կը շոշափենք ի խնդիր, որ վիճաբանութեան և բուռն առարկութիւնների ենթակայ է ֆրանսիական պատգամաւորների ժողովում և սենատում, այսինքն հոգևոր ընկերութիւնների, միաբանութիւնների օրէնքը, որ մի փայլուն էջ է գրաւում ֆրանսիական պառլամենտական կեանքի մէջ։ Այս առթիւ հարկադրուած ենք նախ մի հակիրճ առաջաբան դրնել ընթերցողի առաջ։

Ի՞նչ է լսել արդեօք Գրայֆուտի ազմկայոյզ և աշխարհագրորդ խնդրի մասին, որ մի քանի տարիներ առաջ կլանել էր ո՛չ միայն համայն ֆրանսիայի, այլև ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։ Ֆրանսիական հասարակագիտութիւնը վտանգի մէջ էր բաւիս բովանդակ նշանակութեամբ. . . . Մի մաշ միայն և ազգային խեղկատակներ՝ զանազան Գաբրիել, Գէրուլէտներ, թիւը ազգայնականներ ու միապետական հովերով սագորուած զօրականներ տապալում էին հասարակագիտութեան հոգակալ շէնքը։ Դաւադրութիւնը բացեց և ազգային ֆանֆարոններն ստացան իրենց արժանի պատիժը։ Հասարակագիտութիւնը փրկեց։ Բոլոր անկեղծ հասարակագետականները, արմատականները և սոցիալիստները մի մարմին դարձան այդ ժամանակ Վալդեկ-Ռուստի միջնատրութեան օրով։ Գրութիւնն այն աստիճան լուրջ և կրիտիքական էր, որ, հասարակագիտութիւնը միապետականների ու ազգայնականների ստոր դաւերից փրկելու համար՝ սոցիալիստները համաձայնեցան, ու հոչակաւոր Միլերանը միջնատրական ախոռ


գրաւեց բուրժուազական կառավարութեան մէջ, որ, հակառակ էր ընկերավարական օսմկավարական գաղափարներին, սկզբունքներին. . . .

Ինչևիցէ, Հասարակագիտութիւնը փրկուեց. . . . Գրայֆուտի ազմկայոյզ խնդիրը որոշ լուծում ստացաւ։ Վալդեկ-Ռուստի երեք ամբողջ տարիներ կառավարից փոփոխութիւններն ու անակնկալներն շեղում սիրահար ֆրանսիական երկիրը. . . . Ո՞վ կարող էր եւակայել, որ մի միջնատրութիւն երեք տարի գոյութիւն ունենայ. . . . շտապալուի, դեպի չգլորի։ Ինչ պտուղներ են ֆրանսիացիք, որ իւրաքանչիւր վեց ամիսը մի անգամ միջնատրութիւններ չկործանեն, չլախշախեն։ Ֆրանսիան ներքին հանգստութեան էր կարօտ, և հանգստացաւ։ Ֆրանսիական հասարակագիտութեան փառահեղ շէնքը հարկաւոր էր աւելի և աւելի ամուր ու անյողողող հիմքերի վրայ դնել. բայց ինչպէս երկրի սպայակոյտի համարեա խոշոր մասը դեռևս, գլխաւորապէս հին զօրավարները, միապետական ոգևոր էին սնուած, կրթուած։ Երկրի ամեն գաւառ ճիզուտները և հոգևոր ընկերութիւնները, միաբանութիւնները պատել էին իրենց զարդաների ցանցերով, որոնք կրծում էին հասարակագիտութեան հիմքերը, իրենց սանիկների մտքերը թունաւորելով միապետական, ճեղուտական մտքերով ու զգացմունքներով։ Կաթիլի անբարոյական հոգևորականները, որոնք ցարդ կարող էին՝ առանց տէրութիւնից իրաւունք վերցնելու՝ մասնաւոր գրգռողներ բանալու, մի պատիժ էին դարձել հասարակագիտութեան համար։ Եւ ահա՛ կառավարութիւնը հանց օրինագիծ, որ բոլոր այդ տեսակ մասնաւոր ճեղուտական և ալ զարդաներ փակուին, և այս օրինակիծն ընդունուեց ֆրանսիական թէ՛ պատգամաւորների ժողովում և թէ՛ սենատում։ Ճեղուտները, մեծ մասով, փախան ֆրանսիայից՝ որի տեղեր պլոտը ջրում ձուկ որսալու նպատակով։ Հաղարաւոր զարդաներ փակուեցան, որոնց տէրերը կարող էին այնուհետեւ տէրութիւնից իրաւունք ստանալ և, իհարկին, նորից բանալ, որպէսզի ապիտով կառավարութեան հսկողութեան տակ լինին, պետական ծառի արմատները չըկրծուեն ու քաքայեն։ Թէ ինչ պէս իրագործեց այս օրէնքը և ինչ գոտարութիւնների հանդիպեց կառավարութիւնը մի քանի տեղեր՝ աւելորդ ենք համարում նկարագրել։ Ինչ որ Վալդեկ-Ռուստի սկսեց, նոյնը մեծ յաջողութեամբ և աւելի մեծ եռանդով շարունակեց, այնուհետեւ, նրա յաջորդ՝ Կոմբի միջնատրութիւնը։ Անցաւ մի ժամանակ, սակայն ինչ որ կարծէք մի պակաս էր նըշ-

մարում նոյն օրէնքի մէջ։ Արտաքուստ, ուսուցչութեան իրաւունքներից զրկուած շատ ճեղուտներ ու կղերականներ՝ յանկարծ, մի օր, զգեստները փոխած, իրաւունք են ուզում ստանալ աժմ՝ պետական ուսումնարաններում գաւառներում։ Ինչպէս պիտի վարուէր տէրութիւնը։ Չէ՞ որ նոյն թոյնը, որոնք սերմանում էին նախկին զարդաներում, այժմ, արդէն իրաւունք ստացած, կը սերմանեն նաև պետական ուսումնարաններում։ Չգիտենք որ մարդոց նիսուած հոգին փոխելու ընդունակութիւն ունենալին՝ այժմ կաթոլիկ անբարոյական ճիզուտներն ու հոգևորականները բոլորը հրեշտակներ կը լինէին։ Ինչպէս առնել այս պակասի առաջը. սակայն սրա մասին յաջորդ անգամ։

Ս. Տաշիր.

**Չ Ի Թ Ծ Ե Ա Ն Ի Ս Պ Ա Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն**



Անշուշտ մեր ընթերցողները տեղեկացան որ իր տխուր անցեալով հանրածանօթ Չիթճեան պատուելին Օտեսայի մէջ սպանուեցաւ 3 հայերու կողմէ։ Այսեղ լուրերը նոր առիթ մը տուած է շնչ. կուսակցութեան ամէն կարգի թշնամիներուն իրենց թունաւոր սլաքները արձակելու մեր դէմ։

Այս առթիւ ինքնակոչ յեղափոխականներ և նազըմականութեան թափթիութները ձեռք ձեռքի տուած՝ ամեն տեսակ ցած միջոցներու կը դիմեն վարկաբեկելու համար շնչ. կուսակցութիւնը ժողովուրդին առջև։ Չուրկ մարդկային ամենատարրական աշխուտներէ և հրապարակագրի մը անհրաժեշտ եղող լրջութենէ՝ այս արարածները կը յանդգնին շնչ. կուսակցութեան վերագրել վերոյիշեալ սպանութիւնը առանց սակայն իրենց այդ անլուր ամբաստանութիւնը հաստատող ո՛ւրեքական փաստ գնելու հասարակութեան առաջ։

Վերապահելով մեկ ապագային պատշաճօրէն որակել այս ինկածներու ընթացքը՝ յառայժմ կը բաւականանանք հրաւիրելով ատոնք որ հաստատեն իրենց ազամբաստանութիւնը. հակառակ պարագային պիտի համարենք զիրենք ստոր ու ցածհոգի զրպարտիչներ։

Սակայն, մենք վստահ ենք որ ինչպէս Միսի սպանութեան առթիւ շնչ. կուսակցութեան վերագրուածները անհիմն էին ու զրպարտիչներն ալ խայտառակեցան՝ նոյնը պիտի պատահի և Չիթճեանի պարագային։

Առ այժմ այսքան։

Յ. Գ. Այս դէպքը կուգայ պարզել ընտրող կէտ մը, որուն վրայ կը հրատարակենք մեր ընթերցողներուն ուշադրութիւնը։

